հետևեալ ձևով էր նկարագրում իր առաջին տպաւորութիւնները Հայաստանի մայրաքաղաքից.

«Երբ մտնում էի Երևանի ակումբը, տեսայ, որ իմ բոլոր ծանօթները Բաղուից, Թիֆլիսից, Ռուսաստանից, բոլորը այնտեղ էին: Տէր Աստուած, ո՞վ չկար այնտեղ... Կազմուել էր մի հասարակութիւն, որի անդամները հէնց նոր եկած, իրար գլխի թափուած՝ ուզում էին ստեղծել նոր մայրաքաղաքի բնակչութիւն, նոր պետութեան քաղաքացիութիւն:

Երազ է թւում այս բոլորը:

Բայց սա իրականութիւն է: Հայաստանը կայ և պիտի լինի:

Երևան եկողը առաջին անգամ մի բան կը նկատէ, որ ոչ ոք պարապ չէ: Ամէն մարդ բանի է, ամէն ոք շտապում է հոգածու հապճեպով: Զգիտեմ, Հայաստանի աւերմո՞ւնքն է շատ և հայ ժողովուրդը ջանում է վերաշինել, թէ՞ հարիւրաւոր տարիների խանգարիչ հանգամանքները վերանալուց յետոյ հայը մի հանգիստ սրտով եկել է իր ազատ տունը և իրեն տուել է մի մոլութեան, որ յատուկ է հային. շինել, վերաշինել հէնց միայն, կարծես, շինելու համար...

Ամբողջ ճամբան, որով եկայ Հայաստան և անցայ նրա մայրաքաղաքը, աւերի հետքեր էին և շինող ձեռքի արդիւնքներ: Երևանի փողոցներում տեսնում ես այդ աշխատաւոր ժողովրդին: Արևառ, խստադէմ, տրեխաւոր, կարկատնած, մտահոգ. դա հայ գիւղացին է — գործի է գնում... Այժմ հայ գիւղացին հաց և պաշար ունի՝ արիւն-քրտնքի գնով ձեռք բերած»:*)

Անկախութիւնը խօսք չէր այլևս, այլ իրական փաստ, որ վաւերացուեց և միջազգային իրաւական ճանաչումով: Օգոստ. 10-ին ստորագրուեց Սևրի դաշնագիրը: Հայաստանը դաշնագիր կողմ էր: Ստեղծւում էր Միացեալ Հայաստան: Հայի նիւթական երազը իրականութիւն էր դառնում:

Ա. Ահարոնեանը հետևեալ ձևով էր նկարագրում «պատմական անցքի նկարագիրը», կառավարութեան ուղարկած զեկուցման մէջ**).

«Ճաշից յետոյ, ժամը 4-ին, երկու օթոմոբիլներով Փարիզից հասանք Սևր: Ինձ ուղեկցում էին խորհրդականներ Ա. Էնֆիաջեանը, բժ. Յ. Նէվրուզը և 2 քարտուղարներ: Սևրի յախճապակու յայտնի գեղարուեստական գործարանի գլխաւոր դահլիճը պատրաստուած էր Խաղաղութեան Համաժողովն ընդունելու համար: Այդ դահլիճի ճակատի պատի տակ տեղ բռնեցին մեծ պետութեանց պատուիրակները. աջ ու ձախ պատերի տակ երկու թևերով՝ փոքր դաշնակիցների տեղն էր: Հայաստանը իր տեղն ունէր ձախ թևում, ռումէնների և չեխոսլովակների կողքին, ուր և ես տեղ բռնեցի, մինչդեռ մեր խորհրդականներն ու քարտուղարները տեղաւորուեցին պատուիրակների թիկնաթոռների յետևում, յատուկ պատրաստուած աթոռների վրա: Իմ առջև, սեղանի վրա, դրուած էր փոքրիկ քարտ, որի վրա գրուած էր Plénipotentiaire d'Arménie.

Ժամը 4-ից անց էր, երբ գրեթէ նստած էին բոլոր պետութիւնների ներկայացուցիչները, ներս մտաւ Համաժողովի նախագահ պ. Ա. Միլերան: Բացակայում էին միայն թիւրք պատուիրակները, որոնք սպասում էին վարի

*) «Աշխատաւոր», 22 հոկտ. 1920.

**) Հ.Հ. Պատուիրակութեան «Գործ» № 101, Ահարոնեանի 19 օգ. նամակը Հայաստանի արտ. գործոց նախարարին: